ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

Ընդունվել է Ազգային ժողովի կողմից

1998 թվականի մայիսի 5-ին

Հոդված 684. Լիզինգի պայմանագրի առարկան

1. Լիզինգի պայմանագրի առարկա կարող է լինել լիզինգի պայմանագրով հստակ և որոշակի սահմանված ցանկացած չսպառվող գույք:

2. Լիզինգի պայմանագրի գործողության ընթացքում լիզինգատուն իրավունք ունի պայմանագրով սահմանված կարգով հսկողություն իրականացնելու լիզինգի առարկայի օգտագործման նկատմամբ, այդ թվում՝ ենթալիզինգի և վարձակալության դեպքում:

3. Լիզինգատուն և լիզինգառուն կարող են լիզինգի պայմանագրով ամրագրել լիզինգառուի կամ նրա լիազորած անձի կողմից լիզինգի առարկա հանդիսացող տրանսպորտային միջոցով պետական սահմանը հատելու իրավունքը կամ դրա սահմանափակումը: